ՆՈՐ-ԴԱՐ

№ 164 ՅԱՍՆՕՐՄՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 25 Սեպտեմբերի 1897 Հինգշաբթի 25 Սեպտեմբերի ՅԱՍՆՕՐՄՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 164

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւնների ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բաւին 3 կ., երկրամասերի համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Ինչու եկեղեցական գիւղերի ժողովուրդը վինում է եկեղեցու իրաւաց դէմ։
Թղթակցութիւններ.— Ասխարաւ Դիւնբիւրդա.
Քաղաքական. — Թիւրքիա և Ռուսաստան։
Հեռագրներ։
Բանասիրական. — Լեռնային մանիշակներ։
Ցեղակատու։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հետեւեալ հեռագրերն են ստացած «Կաւկազ» լրագրում.

ԲՈՍՈՒՄ, 21 սեպտեմբերի.—Թագուհի Կայսրուհի Մարիա Փէօդորովնան Օգոստափառ Որդոց Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ, չքամբի ուղեկցութեամբ, Նորին Կայսերական Մեծութեան թիկնապահ գնդապետ-ադիւտանտ իշխ. Բարեթինսկու, Փրէյս Օգերովայի և պալատական վիրաբոյժ Վելեամինովի հետ, հաճեց այսօր, երեկոյեան ժամը 5½-ին ժամանել Բաթում «Գէորգի Պարեգոնոսեց» զրահակիր նաւով։ Բերդից և մարտանաւերից սահմանուած թնդանօթաձգութիւնն եղաւ։ Նաւահանգստից զրահակիր նաւը մղեան Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը, Կովկասի Գառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Դ. Ս. Գալիցինը և Քութայիսի զինուորական նահանգապետ գեներալ-ադիւտանտ Շալիկովը և հրաւիրուեցին Բարձրագոյն ճաշի։ Երեկոյեան նաւակայարանում կանգնած նաւերն ու նաւահանգիստը գեղեցիկ լուսաւորուած էին։ Թրօշակներով, վահաններով և կանաչով զարդարուած նաւահանգստում բազմամարդ ժողովուրդ էր հաւաքուած։ Նորին Կայսերական Մեծութիւնը կըզիշերէ զրահակիր նաւի վրայ։ Մեկնումը նշանակուած է վաղը, երկուշաբթի, առաւօտեան ժամը 9½-ին։

ՍԱՄՏՐԵԴԻ, 22 սեպտեմբերի.—Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Փէօդորովնան Օգոստափառ Որդոց և չքամբի հետ հաճեց այսօր առաւօտեան «Գէորգի Պարեգոնոսեց» զրահակիր նաւից մեկնել Անդրկովկասեան երկաթուղու գնացքը. նաւակայարանում կանգնած նաւերը թնդանօթներ արձակեցին։ Բաթումի բերդապահ գնդ.-մայոր Գողտեապինը Նորին Կայսերական Մեծութեանը պատուաւոր ոսպորտուհց նաւահանգստում, ուր պատուաւոր պահնորդախումբ էր կանգնեցրած, և տեղական վարչական անձերը բաղդունեցան ներկայանալու Թագուհի Կայսրուհուն։ Առաւօտեան ժամը 9½-ին Նորին Կայսերական Մեծութիւնը հաճեց ժամանել Անդրկովկասեան երկաթուղու Բաթումի կայարանը, իսկ ժամը 9-ին 40 րոպէին Կայսերական գնացքը մեկնեց Բորժոմ։

ԲՈՐԺՈՄ 22 սեպտեմբերի.—Բաթումից մինչև Բորժոմ ամբողջ գծի վրայ գրաւուած կայարանները զարդարուած են ծաղիկներով և կանաչով։ Ամբողջ ճանապարհի վրայ բնակիչները ցնծագին դիմաւորում էին Կայսերական գնացքին ողջոյնի «ուռա» աղաղակներով։ Գնացքը Բորժոմ հասաւ երեկոյեան ժամը 6-ին։ Նորին Կայսերական Մեծութիւնը կայարանում դիմաւորեցին Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչը, Թիֆլիսի պ. նահանգապետ Ֆ. Ս. Ռիկովը, Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ Իշխ. Գ. Ի. Բագրատիոն-Մուխրանսկին, պայծառափայլ իշխանուհի Ց. Դ. Դրուժինսկին աղջկանց հետ, զանազան հաստատութիւնների և տեղական վարչութեան ներկայացուցիչներ. Բորժոմը գեղեցիկ լուսաւորուած է։ Թագուհի Կայսրուհին Օգոստափառ Ընտանիքի հետ հաճեց մեկնել Բորժոմի Մեծ պալատը։

—

Կովկասի պ. Գառավարչապետ իշխան Դ. Ս. Գալիցինը սեպտեմբերի 27-ին Ախալցխայի և Ախալքալաքի վրայով ճանապարհ կընկնի դէպի Կաղզուան։ Նորին պայծառափայլութիւնը Կարսի շրջանից Թիֆլիս կվերադառնայ հոկտեմբերի սկզբին։

—

Թիֆլիս քաղաքի խորհրդի նորընտիր անդամներն իրենց մէջ մասնաւոր ժողովներ են կազմում և խորհում քաղաքագլխի ընտրութեան մասին, և արդէն իրաւասուների որոշ շրջաններն ունին իրենց կանդիտատները։ Մի քանի կանդիտատների անունները արդէն հրապարակի վրայ են դրուած, որոնք պատուական մարդիկ են, թէպէտև քաղաքային հասարակական գործերի համար բոլորովին նոր են։ Կանդիտատների ցուցակում չէ յիշուած երդուեալ հաւատարմատար պ. Գէորգ Նազարեանի անունը, բայց եթէ նա ինքը համաձայնուի, հաւատացնենք, որ նա միւսներից աւելի շահ և յարմարութիւններ ունի Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնը վարելու։

Իսկ եթէ նորընտիր իրաւասուները (հայերը) իրենց մէջ խմբերի բաժանուած կուսակցական շահերից, աւելի ճիշտն անձնական միտումներից չեն կարող միաբանուել և միմեանց հակառակ նոր և նոր կանդիտատներ պիտի առաջ բերեն, մենք կարծում ենք որ շատ և շատ հանգամանքներ և քաղաքի իսկական շահերը ի նկատի առած ամենայարմարաւոր կանդիտատը պէտք է լինի իշխան Ճերվաշիձէն, եթէ միայն նա համաձայնի Թիֆլիս քաղաքի քաղաքագլխի պատուաւոր կոչումն ընդունելու։

Այս մեր առաջարկութեան մասին կըխօսենք հետեւեալ համարում։

—

Սեպտեմբերի 23-ին Թիֆլիս հասաւ պատահական հեռագրական շրջանի նոր կառավարիչ Կ. Մ. Լինդէնը։

—

Վալպարայզօյի ռուսաց ներկայացուցիչ բարոն Կիստերը ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնական է նշանակուած Կովկասի գլխաւոր վարչութեան արտատամանեան յարաբերութիւնների համար։

—

Վլադիկաւկազում տեխնիկական բարձրագոյն ուսումնարան հիմնելու խնդիրը լուսաւորութեան մինիստրութեան ուսումնական մասնաժողովում կըքննուի այս աշնանը։

—

Կովկասի Գառավարչապետը երկրագործութեան մինիստրութեանը միջնորդել է ռուսաց թուչնաբուծութեան ընկերութեան ճիւղ բանալու Թիֆլիսում։

—

Մեզ գրում են հետեւեալը.

«Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան գրադարան ընթերցարանը կատարեալ աղքատանոցի է նման. թէ ներսը և թէ դուրսը ողորմելի տեսարան է ներկայացնում։ Ընթերցարանում երբեմն խաղաղ ընթերցանութեան միջոցին, պատուհանից յանկարծ հնչում է մի թշուառականի ձայն. «Ադա ջան, արևներուդ սադաղա, մէ բան բաշխէք». և այս տեսարաններն ու ձայները գրեթէ շարունակ կրկնւում են։ Լաւ չէր լինիլ, որ ընթերցարանի վարիչները դրա դէմ մի ճար անէին և այդ ողորմելիներին ժամերով ու օրերով սպասեցնել չտային։ Լաւ կըլինէր, որ ընկերութեան անդամները հայ գաղթականների վրայ աւելի խնամք տանեն և նրանց ճանապարհ ցոյց տան նըպաստ ստանալու Կովկասի գլխաւոր վարչութեան մէջ նրանց օգտին հաւաքուած գումարից։

Ի դէպ, բացի հայ գաղթականներից, Թիֆլիսում կան տեղական տնանկ-աղքատներ, որոնց հայկական ամօթխածութիւնը թոյլ չի տալիս ողորմութիւն խնդրելու. քահանաների պարտաւորութիւնն է այդպիսիների ցուցակ կազմել և առաջարկել բարեգործ անձանց»։

—

Ցայտնի աւազակ Հալայ-բէկի մասին «Կաւկազ»-ի մէջ հետեւեալ տեղեկութիւնն ենք գտնում։ Հալայ-բէկ Մուրակուլովն այս օրերս իւր մի թիկնապահի ուղեկցութեամբ, միլիցիայի պարապրշիկի հագուստով յայտնւում է Մանգլիսի գիւղում, ուր և 2—3 ժամ մի շրջագայութիւն է կատարում, ինչ-որ դիտելով։ Մանգլիսի բնակիչներն այնքան չփոթւում են, որ աւազակի իրենց աւանում երեւալու մասին իսկոյն չեն կարողանում տեղեկութիւն տալ իշխանութեանը։ Ոստիկանութեանն այդ մասին հաղորդում են միայն այն ժամանակ, երբ Հալայ-բէկը, մինչև անգամ մի քանի բաներ գնելով, արդէն հեռացած էր Մանգլիսից։ Աւազակին նոր սկսում են հետամուտ լինել, բայց արդէն ուշ լինելով, ոչ մի հետեւանքի չեն հասնում։

—

Գոստային միջազգային դաշնակցութեան ներկայացուցիչները խնդիր են յարուցել միջազգային պոստային մարկ ընդունելու, որը, բացի նամակների վրայ կպցնելուց, միևնոյն ժամանակ միջազգային մանր դրամի տեղ ծառայէր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՄԱՆԻՇԱԿՆԵՐ

(Անդրէ Տէրրիէից)

—

Այս բանը իրիկնադէմին էր, սրանից քանի և հինգ տարի առաջ, Զուիցերիական Այլպերի մի գիւղում, ուր ինձել էինք գիշերելու, լեռնային մեր երկար ճանապարհորդութիւնից յետոյ։ Հազիւ էինք մտել շազանակի հոյակապ ծառուղին գիւղի առաջ, երբ նկատեցինք, որ նստարանից բարձրացաւ և խոտերում թագնուեց մի գեղանի մանկահաս աղջիկ, իւր տասնեւութամեայ ամբողջ գեղեցկութեամբ։ Գունատ և գեղեցիկ դաւաւորած թանձր, գեղգեղ մազերով, որոնք մատանիների ձեւով ընկած էին նրա հրաշագեղ ուսերի վրայ, սպիտակափայլ հագուստով, որը շրջազգել էր նրա դիւրաշէջ իրանը.—նա հպարտ և վսեմ քայլուածքով անցաւ մեր մօտից։ Ու երբ չուռ եկաւ մեր հետեւման շրուկի վրայ, որ մենք փոխանակեցինք իրար հետ, տեսանք նրա նուրբ, վեհանձն կիսադէմքը—կարմիր շուրթերով, գեղեցիկ քթով ու պայծառ, հպարտ աչքերով։ Մենք երեքս էլ հիացած էինք և մոռանալով յոգնածութիւնը, գնացինք նրա յետեւից երկու այգիների միջեւեալում ոլորաձև ընկած նեղլիկ

Մեծութիւնը կըզիշերէ զրահակիր նաւի վրայ։ Մեկնումը նշանակուած է վաղը, երկուշաբթի, առաւօտեան ժամը 9½-ին։

ՍԱՄՏՐԵԴԻ, 22 սեպտեմբերի.—Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Փէօդորովնան Օգոստափառ Որդոց և չքամբի հետ հաճեց այսօր առաւօտեան «Գէորգի Պարեգոնոսեց» զրահակիր նաւից մեկնել Անդրկովկասեան երկաթուղու գնացքը. նաւակայարանում կանգնած նաւերը թնդանօթներ արձակեցին։ Բաթումի բերդապահ գնդ.-մայոր Գողտեապինը Նորին Կայսերական Մեծութեանը պատուաւոր ոսպորտուհց նաւահանգստում, ուր պատուաւոր պահնորդախումբ էր կանգնեցրած, և տեղական վարչական անձերը բաղդունեցան ներկայանալու Թագուհի Կայսրուհուն։ Առաւօտեան ժամը 9½-ին Նորին Կայսերական Մեծութիւնը հաճեց ժամանել Անդրկովկասեան երկաթուղու Բաթումի կայարանը, իսկ ժամը 9-ին 40 րոպէին Կայսերական գնացքը մեկնեց Բորժոմ։

ԲՈՐԺՈՄ 22 սեպտեմբերի.—Բաթումից մինչև Բորժոմ ամբողջ գծի վրայ գրաւուած կայարանները զարդարուած են ծաղիկներով և կանաչով։ Ամբողջ ճանապարհի վրայ բնակիչները ցնծագին դիմաւորում էին Կայսերական գնացքին ողջոյնի «ուռա» աղաղակներով։ Գնացքը Բորժոմ հասաւ երեկոյեան ժամը 6-ին։ Նորին Կայսերական Մեծութիւնը կայարանում դիմաւորեցին Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչը, Թիֆլիսի պ. նահանգապետ Ֆ. Ս. Ռիկովը, Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ Իշխ. Գ. Ի. Բագրատիոն-Մուխրանսկին, պայծառափայլ իշխանուհի Ց. Դ. Դրուժինսկին աղջկանց հետ, զանազան հաստատութիւնների և տեղական վարչութեան ներկայացուցիչներ. Բորժոմը գեղեցիկ լուսաւորուած է։ Թագուհի Կայսրուհին Օգոստափառ Ընտանիքի հետ հաճեց մեկնել Բորժոմի Մեծ պալատը։

—

Կովկասի պ. Գառավարչապետ իշխան Դ. Ս. Գալիցինը սեպտեմբերի 27-ին Ախալցխայի և Ախալքալաքի վրայով ճանապարհ կընկնի դէպի Կաղզուան։ Նորին պայծառափայլութիւնը Կարսի շրջանից Թիֆլիս կվերադառնայ հոկտեմբերի սկզբին։

—

Թիֆլիս քաղաքի խորհրդի նորընտիր անդամներն իրենց մէջ մասնաւոր ժողովներ են կազմում և խորհում քաղաքագլխի ընտրութեան մասին, և արդէն իրաւասուների որոշ շրջաններն ունին իրենց կանդիտատները։ Մի քանի կանդիտատների անունները արդէն հրապարակի վրայ են դրուած, որոնք պատուական մարդիկ են, թէպէտև քաղաքային հասարակական գործերի համար բոլորովին նոր են։ Կանդիտատների ցուցակում չէ յիշուած երդուեալ հաւատարմատար պ. Գէորգ Նազարեանի անունը, բայց եթէ նա ինքը համաձայնուի, հաւատացնենք, որ նա միւսներից աւելի շահ և յարմարութիւններ ունի Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնը վարելու։

Իսկ եթէ նորընտիր իրաւասուները (հայերը) իրենց մէջ խմբերի բաժանուած կուսակցական շահերից, աւելի ճիշտն անձնական միտումներից չեն կարող միաբանուել և միմեանց հակառակ նոր և նոր կանդիտատներ պիտի առաջ բերեն, մենք կարծում ենք որ շատ և շատ հանգամանքներ և քաղաքի իսկական շահերը ի նկատի առած ամենայարմարաւոր կանդիտատը պէտք է լինի իշխան Ճերվաշիձէն, եթէ միայն նա համաձայնի Թիֆլիս քաղաքի քաղաքագլխի պատուաւոր կոչումն ընդունելու։

Այս մեր առաջարկութեան մասին կըխօսենք հետեւեալ համարում։

—

Սեպտեմբերի 23-ին Թիֆլիս հասաւ պատահական հեռագրական շրջանի նոր կառավարիչ Կ. Մ. Լինդէնը։

—

Վալպարայզօյի ռուսաց ներկայացուցիչ բարոն Կիստերը ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնական է նշանակուած Կովկասի գլխաւոր վարչութեան արտատամանեան յարաբերութիւնների համար։

—

Վլադիկաւկազում տեխնիկական բարձրագոյն ուսումնարան հիմնելու խնդիրը լուսաւորութեան մինիստրութեան ուսումնական մասնաժողովում կըքննուի այս աշնանը։

—

Կովկասի Գառավարչապետը երկրագործութեան մինիստրութեանը միջնորդել է ռուսաց թուչնաբուծութեան ընկերութեան ճիւղ բանալու Թիֆլիսում։

—

Մեզ գրում են հետեւեալը.

«Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան գրադարան ընթերցարանը կատարեալ աղքատանոցի է նման. թէ ներսը և թէ դուրսը ողորմելի տեսարան է ներկայացնում։ Ընթերցարանում երբեմն խաղաղ ընթերցանութեան միջոցին, պատուհանից յանկարծ հնչում է մի թշուառականի ձայն. «Ադա ջան, արևներուդ սադաղա, մէ բան բաշխէք». և այս տեսարաններն ու ձայները գրեթէ շարունակ կրկնւում են։ Լաւ չէր լինիլ, որ ընթերցարանի վարիչները դրա դէմ մի ճար անէին և այդ ողորմելիներին ժամերով ու օրերով սպասեցնել չտային։ Լաւ կըլինէր, որ ընկերութեան անդամները հայ գաղթականների վրայ աւելի խնամք տանեն և նրանց ճանապարհ ցոյց տան նըպաստ ստանալու Կովկասի գլխաւոր վարչութեան մէջ նրանց օգտին հաւաքուած գումարից։

Ի դէպ, բացի հայ գաղթականներից, Թիֆլիսում կան տեղական տնանկ-աղքատներ, որոնց հայկական ամօթխածութիւնը թոյլ չի տալիս ողորմութիւն խնդրելու. քահանաների պարտաւորութիւնն է այդպիսիների ցուցակ կազմել և առաջարկել բարեգործ անձանց»։

—

Ցայտնի աւազակ Հալայ-բէկի մասին «Կաւկազ»-ի մէջ հետեւեալ տեղեկութիւնն ենք գտնում։ Հալայ-բէկ Մուրակուլովն այս օրերս իւր մի թիկնապահի ուղեկցութեամբ, միլիցիայի պարապրշիկի հագուստով յայտնւում է Մանգլիսի գիւղում, ուր և 2—3 ժամ մի շրջագայութիւն է կատարում, ինչ-որ դիտելով։ Մանգլիսի բնակիչներն այնքան չփոթւում են, որ աւազակի իրենց աւանում երեւալու մասին իսկոյն չեն կարողանում տեղեկութիւն տալ իշխանութեանը։ Ոստիկանութեանն այդ մասին հաղորդում են միայն այն ժամանակ, երբ Հալայ-բէկը, մինչև անգամ մի քանի բաներ գնելով, արդէն հեռացած էր Մանգլիսից։ Աւազակին նոր սկսում են հետամուտ լինել, բայց արդէն ուշ լինելով, ոչ մի հետեւանքի չեն հասնում։

—

Գոստային միջազգային դաշնակցութեան ներկայացուցիչները խնդիր են յարուցել միջազգային պոստային մարկ ընդունելու, որը, բացի նամակների վրայ կպցնելուց, միևնոյն ժամանակ միջազգային մանր դրամի տեղ ծառայէր

ներում անցկացրի մի չարաթ, ամբողջ ժամանակ ման էի գալիս ոտով, և քնում էի խոտի վրայ. ուստի և իմ պաճուճանքը մնում էր խիստ անփոյթ դրութեան մէջ.—բաւական երկար գըզգուած մօրուք, կոտրտուած գլխարկ, տրորուած զգեստ և ցեխոտ կօշիկներ,—ահա իմ մարմնիս զարդարանքները։ Նա, ակներև է, նաւաստիի տեղ ընդունեց ինձ,

—Շնորհակալ եմ,—ասաց նա ընդմիջելով.—արդեօք չէք՝ հաճիլ այժմ ինձ Դիւէն տեղափոխել։

Թաւ նաւակի մէջ և թիակի մի հարուածով ափից հեռու մղեցի այն. ապա սկսեցի քաշել, երբ նա արդէն նստել էր զեկի վրայ։ Լուսինը, որն այժմ արդէն բարձրացել էր բաւականին վեր, լուսաւորում էր նրա գեղատեսիլ դէմքը, որ փայլում էր երկար թերթերունքներով ստուերագծած, սև աթի նման պայծառ աչքերով։ Նրա կորսաժի վրայ ամրացրած լեռնային մանուշակների փունջն իւր հօտը տարածում էր շատ հեռու, հովացած շուշանի բուրմունքի նման։

—Ես վաղուց կամենում էի այս գրօսանքը կատարել.—հարկաւոր համարեց ասել նա, որպէս բացատրութիւն,—պէտք է ասած, որ մօրաքոյրս ասստիկ վախենում է ջրից. իսկ միսս Գրէյը—օ, նա մինչև անգամ իւր ստուէրից էլ է վախենում։ Մի խօսքով մի կատարեալ թրջուած հաւ։ այդ պատճառով էլ ես վճռեցի գնալ, մին-մինակ լողալ, և եթէ այդ շղթան չխանգարէբ, ես արդէն հեռու կըլինէի։

Նա խօսում էր ֆրանսերէն շատ մաքուր լեզուով, բայց օտարազգեայ թեթև շեշտումով, որը նրա խօսքերին մի տեսակ կայտառ գեղեցկութիւն էր տալիս։

Հիացմունքիցս պատասխանել չէի կարողանում, այլ սկսում էի նաւակը հրել այնպէս ուժգին, որ մենք արդէն լճի մէջտեղն էինք հասել։

—Դուք խիստ յարմար աւիթի եկաք,—շարունակեց նա,—և զուր չէք կորցնել ձեր ժամանակը, որովհետև այդ ջանքերս համար այն բաւականութեամբ, որ բախտ ունեցայ ձեր գիշերային զբօսանքին ուղեկցելու։

Նա արագ բարձրացրեց իւր գլուխը և կնճիռներ կիտելով, տհաճութեամբ ինձ էր նայում։

—Հապա ով էք դուք,—հարցրեց նա ամբարտաւանութեամբ։

—Ես մի համեստ ճանապարհորդ եմ, բախտաւորուած այն բանով, որ դէպքը օգնեց ինձ ձեզ ծառայութիւն մատուցանելու։

Ա. Ֆրանսն ասում է, որ Ռուսաստանի ներկայացուցիչը Լոնդոնում ոչ մի կերպ չի կարողանում համոզել Անգլիայի կառավարությանը, որ Ռուսաստանը ոչ մի դավադրական նպատակ չունի Բուլղարիայի հանդեպ։

Ֆրանսիայի ֆինանսական շրջանները կարծում են, որ Ռուսաստանի հետ առևտրական պայմանագրի կնքումը մոտ ապագայում անհնարին է։

Ռուսական «Գոլոս»-ի № 145-ում Պետերբուրգի Կենսագրական ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Ս. Վերխովսկին հրատարակում է հետևյալ հետաքրքրական հոդվածը։

Ամեն անգամ, երբ ես ուզում եմ ինձ համար ինչ-որ գիրք ընտրել, ինձ միշտ տանջում է այն հարցը, թե ինչ գրքեր պետք է կարդալ։ Ես ուզում եմ ասել, որ ես ինձ համար ընտրում եմ ոչ թե այնպիսի գրքեր, որոնք ինձ հետաքրքրում են, այլ այնպիսիները, որոնք ինձ պետք են։ Ես ուզում եմ ասել, որ ես ինձ համար ընտրում եմ ոչ թե այնպիսի գրքեր, որոնք ինձ հետաքրքրում են, այլ այնպիսիները, որոնք ինձ պետք են։ Ես ուզում եմ ասել, որ ես ինձ համար ընտրում եմ ոչ թե այնպիսի գրքեր, որոնք ինձ հետաքրքրում են, այլ այնպիսիները, որոնք ինձ պետք են։

ԹԵԼԵՍԿՈՊԱԿԱՆ

ՈՒՐԱՆ, 13 նոյեմբերի։— Որպես վերջին լուր, ստացանք հետևեալ հեռագիրը։

Կիևից մեզ հաղորդում են, որ Կիևի Ներքին քաղաքում տեղի ունեցած հրդեհի ժամանակ ոստիկանական պաշտոնեաներ Ռոմանովսկին և Ռոզենբերգը, որոնք ուզում էին ներս մտնել մի տան մեջ, որտեղ հրդեհ էր տեղի ունեցել, ներսից կրակոցներ են արձակել։ Ռոմանովսկին սպանվել է, իսկ Ռոզենբերգը՝ վիրավորվել։ Ներսում գտնվողները ձերբակալվել են։

* *

Ստացվել է, որ Գարեգին Հովսեփյանը, որին մեղադրում էին Թիֆլիսի հրդեհներին մասնակցելու մեջ, ձերբակալվել է Ռոստովում։ Նրա մոտ գտել են 8000 ռուբլու հայ թղթադրամներ։

Ռոստովում ձերբակալվածները ուղարկվել են Թիֆլիս։

Ռոստովի ոստիկանական վարչությունը հայտնում է, որ Հովսեփյանի մոտ գտնված 8000 ռուբլու հայ թղթադրամները կեղծ են։

Ռոստովում ձերբակալվածների մեջ կա մի ուրիշ հայ էլ, որի մասին դեռ ոչինչ հայտնի չէ։

Ռոստովի ոստիկանական վարչությունը հայտնում է, որ Հովսեփյանի մոտ գտնված կեղծ թղթադրամները նա ստացել է Ռոստովում ապրող մի հայից, որի անունը նա չի ուզում ասել

ստացած հետեւեալ տեղեկութիւնները է հրատարակել։ Քաղաքական մի քանի գործիչների սուլթանի չնորհած ներման խիստ դէմ են կանգնել Զէքի, Միմաուխ և Ռըտվան փաշաները, որոնք երեքն էլ նուիրուած են Իզէտ բէյի քաղաքականութեանը։ Հենց որ ներումը ցոյց տրուեց, անմիջապէս տաք կռիւ ծագեց պալատում տիրող ազնիւ և ազնիւ տարրերի միջև։ Սակայն յաղթանակը թեքւում է անազնիւների կողմը։ Այդ հոմերական կռուի հետեանքից է կախուած կայսրութեան վիճակը և մանաւորապէս Մուրադ բէյինը։

—«Times»-ի Կ. Պոլսի թղթակիցը գրում է, թէ ռուսաց դիւանագիտութիւնն այն կարծիքն ունի, որ Եւրոպան երկրորդ անգամ չի միջամտիլ Յունաստանի օգտին և այդ երկիրը կը թողնի իւր սեպհական ոյժերին, եթէ յունաց պատգամաւորների ժողովը հրաժարուի հաշտութեան նախնական պայմաններն ընդունելուց։

—Գարիգի, Վենայի և Բեռլինի կառավարութիւնները «Polit. Corresp.»-ի ասելով, հարկաւոր են համարել Աթէնքում յայտարարել, որ իրենք կատարելապէս համակարծիք են Ռուսիայի հետ այն մասին, որ հաշտութեան նախնական պայմանագիրը ստորագրելուց յետոյ միջամտող պետութեանց առաքելութիւնը վերջացած է։ Յունաց կառավարութիւնն այժմ գիտէ, որ ինքը պիտի լինի պատասխանատու իւր գործողութեան համար, եթէ պատգամաւորների ժողովը չհաստատի պայմանագիրը։ Աթէնքից, սեպտեմբերի 18-ից հաղորդում են, որ այնտեղի պատգամաւորների շրջաններում աւելի ու աւելի համոզում են, որ պայմանագիրն անհրաժեշտ է ընդունել։

—«Times»-ը հաղորդում է, որ Թեսկալոթիայում (Գրեաէ) երիք քրիստոնեայ ազգութիւն համար ձերբակալուած ինն մահմեդական Գանէ են տարուած։ Հարկաւոր են համարում խստիւ պատժել նրանց ի խրատ ուրիշների։

—Կրետէի քաղաքներում մահմեդական բնակիչները թշնամութեան մէջ են. կենսական մթերքներ չեն բերում, և կարծում են, որ չուտով էլ չեն բերուիլ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԴԱՐՄՇՏԱԴ, 23 սեպտեմբեր.—Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին մեծ հերցոգների զոյգի և օգոստափառ միւս անձերի հետ մի ուղեւորութիւն կատարեցին դէպի Պրանիխշտային լեռը, իսկ երեկոյեան ներկայ էին պալատական թատրոնում տեղի ունեցած ներկայացմանը։

ԴԱՐՄՇՏԱԴ.—Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, մեծ հերցոգը, մեծ հերցոգուհին և մնացած օգոստափառ անձերը խմել վայելեցին Բատենբերգի պրինցես Վիկտորիայի մօտ Լուիզէն պլացի պալատում։

Գրաֆ Մուրաւեովը մեկնում է Բադէն Բադէն։

ԼՈՆԴՈՆ.—Գեներալ Կիչները հեռագրում է, որ սեպտեմբերի 11-ից Օսման Դիգմայի զօրքը յետ է նահանջում դէպի Օմդուրման. արեւելեան Սուդանի բոլոր ցեղերը անջատուել են մահդիականութիւնից։

ԱԹԷՆՔ.—Փինանսների մինիստր Սոբէյրը լրագրողների հետ ունեցած զրուցատրութիւնների ժամանակ ասել է, որ անյապաղ համաձայնութիւն կը կայացնի նախկին պարատաէրների հետ և մի փոխառութիւն դուրս կը թողնի պատերազմական տուգանքը վճարելու համար, որից յետոյ կրկին կըստանձնի բանկի կառավարչի պաշտօնը։

ԲՈՄԲԷՅ.—Ճանապարհորդների Սուէշ Լուօդորը, Լաստա մանելու համար արած անաջող փորձից յետոյ, վերադարձաւ Հնդկաստան։ Լուօդորն իւր ուղեկիցների հետ գերի էր ընկել Թիբէտացիների մօտ, որոնք նրանց մահուան էին դատապարտել, բայց յետոյ ազատ էին թողել, նախապէս ստանձնի ենթարկելով նրանց, որի ժամանակ Լուօդորը 22 վէրք էր ստացել։

ՄԱԴՐԻԴ.—Մինիստրութիւնը կազմակերպուած է հետեւել կիբպով. Սագաստանախագահ, արտաքին գործերի մինիստր—Դիլոն, արդարադատութեան—Ռոմէրօ Ռիբան։ գինուորական—Կորբէա, ծովային—Բերշեխո, ֆինանսների—Լոպէց Պուիգերվեր, ներքին գործերի—Կապդեպո, աշխատանքների—Գսրկվէնա և գաղութների—Մորէտ։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈԼԼԷՆԴԵՐԻ
ԿԱԾԿՈՃԻ (ՄԱՋՈՒԼ) ՀԵՂՈՒԿ

Ազնչացնում է կոշկոճը և աւելամսերը։

ՄՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

2 սրուակը պոստով Եւրոպական Ռուսիայում ուղարկւում է ՄԷԿ ՐՈՒԲԼԻՈՎ։

Կարելի է ստանալ Կայսրութեան դեղատնային և պարֆիւմերային բոլոր խանութներում.
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ

Лабораторія І. Голлендеръ.

С. ПЕТЕРБУРГЪ.

Демидовъ пер. д. № 1.

(.)30326. 10—10

Հոյս տեսաւ
ԼԵՐՄՈՆՏՈՎԻ
ՀԱՋԻ ԱԲՐԻՔ
ՊՈԵՄԱՆ

Թարգ. Մ Ի Մ. ՀՈՎՈՒԵԱՆ
Գինն է 5 ԿՈՊԷԿ
Վաճառւում է Բագւում
Մ. Ղազարեանի տպարանում
10—3.

ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՍՓԻՒՌԻՔԱՆԵԱՆ
Տեղափոխուեց Սերգիևսկայա փողոց տ. № 1 (Սոլոլակ)
(820) 3—2

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ
„ԱՆՑԱԳԸ“
(Փիլիսոփայական զրոյց)
ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.
(5—5

Մ. ՄՈՒՐՏԱԳԸ
Այս օրերս կբսկսի ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՒՈՒ դասերը յ-ր բնակարանում, —Մադաթովսկայա, տուն Գ. Մարտիրոսեանի։ Կարելի է տեսնել ժամը 3-ի մօտերը։
(816) 5—5

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
Կամենում է հայ ընտանիքներում ՄԱՑՐԵՆԻ ԼԵԶՒԻ դաս ևս ունենալ ցանկացողները իրենց հասցէն պէտք է յղուեն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։ 7—7

ՇՈԿՈԼԱԴԸ
Совершенно
БЕЗЪ ВСЯКИХЪ
ПРИМѢСЕЙ
Избѣгать поддѣлокъ
С.СІУИК
МОСКВА.
(М. 52—37

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՌՕՍՍԻԱ“
Բարձրագոյն հաստատուած 1881 թուին
Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 25.500,000 ՌՈՒԲԼԻ
Ընկերութիւնն ընդունում է։

ԿԵՆԴԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն դրամագլխի և եկամտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ ծերութեան ժամանակ, օժիտ աղջկերանց համար, ստիպենդիա երեխաների համար և այլն. առանձին չնահատ պայմաններով. ապահովագրողները մասնակցում են ընկ. օգտին։

Ըստ 1-ն յունուարի 1896 թ. «ՌՕՍՍԻԱ» ընկերութիւնը ապահովագրած ունի 35.563 անձ,—91.406,948 րուբլի գումար։

ԴԻՄԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ինչպէս առանձին անհատների նոյնպէս և հաւաքական անձանց, այն է—գործարաններում ծառայողների, բանուորների և այլն նուազեցրած վճարներով չնորհիւ դիվիդենդի, որը վճարներից դուրս էհաշուում։

ՀՐԴԵՒԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ չարժական և անչարժ կալքերի (չինութիւնների, մեքենաների, ապրանքի, կահ-կարասիքի և այլն)։

ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. նաւերի ապահովագրութիւն

Ապահովագրութիւն ընդունւում է Ս.-Պետերբուրգում (Большая Морская, соб. д. № 37.) Թիֆլիսում Սերգիևսկի փողոց, № 6, և զանազան քաղաքների գործակալութիւններում։

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ ժամանակ դէպքերից, երկաթուղիով կամ շոգենաւով ճանապարհորդած ժամանակ, երկաթուղային կայարաններում և ծովամատոյցներում։

(669) 52—50

ՄԻՆՉԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ
БРАТСКАЯ ПОМОЩЬ
ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ

Գրական—Գիտական ժողովածուի համար, որի տպագրութիւնը վերջանում է։ Այս գիրքը կազմում է մի մեծ հատոր, բաղկացած 950 էջից և 160 նկարներից։

Ժողովածուի օրինակները հանդէս են գրուած ստորագրութեան տեղերում։

Բաժանորդագրութիւն ընդունում է Մոսկուայում «Русскія Вѣдомости» լրագրի գրասենեակում և հետեւեալ գրավաճառանոցներում, Կաշբանիկովի (Մոխովայա), «Ծրուց» (Յվերսկայա), «Նովոյէ Վրեմեայի» և Վոլֆի (Կուզնեցկի մոստ), «Ռուսկայա Միսլի» (Նիկիտսկայա), ԹԻՖԼԻՍՈՒՄ ստորագրութիւն ընդունւում «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հատորի գինը 4 ր.։ Լաւ թղթի վրայ տպագրուած գրքի համար ստորագրութիւնն այլևս չի ընդունւում։

Ձանապարհի ծախքի գինը—վերադիր վճարով։

Լոյս տեսնելուց գիրքը կարժենայ 5 ր.։

Խմբագրութեան հասցէն Москва Зубовскій бул. д. 6. кв. 1.

Այս ժողովածուի նպատակը համակրող հրատարակութիւնները խնդրում ենք բարեհաճեն արտատպել այս յայտարարութիւնը։

5—4 Խմբագիր՝ Դ. ՔԱՆՉԵԱՆ

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ»-Ի
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

ՎԱՃԱՌՈՒՄԻ Է

ԹԻՖԼԻՍ՝ «Կենդրոնական գրավաճառանոցում»
ԵՐԵՒԱՆ՝ «Կարապետ Դատամեանի գրավաճառանոցում»
ԲԱԳՈՒ՝ «Հղինակի մօտ» 10—2

Ստացուեց եւ վաճառւում է
Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ
ՆԵՐԴԱՇՆԱԿԱԾ
ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ
ՆՈՒԱՀԱՑՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՀԱՑՆ

Գինն է պարտիտուրի 10 ր., ճանապարհածախս 8 ֆունտի համար. չորս ձայնի բինը (սոպրանօ, ալտ, տէնօր, բաս) չորս տետրակի մէջ 10 ր., ճանապարհածախս 7 ֆունտի համար։

Դիմել Մ. Եկմալեանին, Թիֆլիս, Ներսիսեան դպրոց։
(818) 5—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ընդունում է երեխեկ, կիսամեծակաւոր և պիչերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է Գամնազիոնների, Գաղետների Կօրպուսի, Զեմլէմէրների, Րէալական եւ այլ ուսումնարանների համար։

Փորը պատրաստականում երեխաները ընդունւում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են քարծրագոյն ուսումն ստացած մասնագէտները, գիմնազիական ուսուցիչները։ Առանդի առարկաներն են, կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, երաժշտութիւն, արքերա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, (ռուսաց և ընդհանուր) բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։

Օտար երէցկներէն համար են անձնական պետական յարմարութիւններ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Гановская ул., № 11. 3 դպ. գիմնազիայի մօտ
(817) 10—7

Дозв.цензурою, Тифлисъ, Сентября 24-го дня 1897 г., Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп домъ Рейтера